

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ

Ա) Լսարանային եւ Դասախօսական Հաւաքոյթներ. — Ենթահիւ Ամերիկահայ ծանօթ ազգային եւ բարերար Տիար Եղուարզ Մարտիկեանի իշխանական նուիրատուութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Ժառանգաւորաց Վարժարանի ձեռնարանի շէնքը ենթարկուեցաւ ներքին եւ հիմնական նորոգութիւններու եւ վերածուեցաւ մնայուն թանգարանի մը եւ կոչուեցաւ «Հէլէն եւ էտուըրտ Մարտիկեան Թանգարան»։ Հայոց Վանքէն ներս մնայուն թանգարան մը ունենալու անհրաժեշտութիւնը կարելի պիտի դարձնէր Հանրութեան ցուցադրել Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի պատկանող Հայկական արուեստի նմուշները։ Թանգարանի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 21 Յուլիս 1969-ին բացառիկ Հանդիսաւորութեամբ եւ մեծ շուքով եւ մինչեւ Հոկտեմբեր երկարեցաւ «Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Գանձերը» Յուշահանգէսը, արժանանալով բոլոր այցելուներու բուռն հիացման, գովեստին եւ սքանչացման։

Այս առթիւ, յարմար նկատուեցաւ լսարանային եւ դասախօսական Հաւաքոյթներու շարքի մը ձեռնարկել Կիւլպէնկեան Մատենադարանի սրահին մէջ։ Արդարեւ, Յուլիս 23ին, 24ին եւ 29ին տեղի ունեցան հետեւեալները. —

ա) Սէմրօզիում — «Ուսումնասիրութիւն Հայերէն Աստուածաշունչի Թարգմանութեան»։ Պօռք առին Գեորգ. Տ. Եւահէ Եպս. Ա. ճէմեան, Հոգւ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գաբրիկեան, Տղթ. Մայքըլ Սթօն, Փրօֆ. ձօն Սթրակնըլ, Փրօֆ. Պայիմ Բապին։

բ) Հրապարակային Դասախօսութիւն. —

«Հայկական Մանրանկարչութիւն» — Դասախօս՝ Փրօֆ. Արթակ Միխիթարեան։

գ) Հրապարակային Դասախօսութիւն. — «Ուսումնասիրութիւն Հայկական Մանրանկարչութեան» — Տղթ. Մայքըլ Սթօն։

դ) Հրապարակային Դասախօսութիւն. — «Ակնարկ մը Հայ Պատմական Գրականութեան Մասին» — Տղթ. Աւետիս Մանճեան։

Բ) Մատենադարանի Նորոգութիւններ և Յաւելումներ. — Ինչպէս որ անցեալ տարուայ Տարեկան Տեղեկագրին մէջ անդրադարձած էինք, շնորհիւ Լոնտոնի Ս. Սարգիս Պնամակալ Մարմնի կողմէ Երուսաղէմ զրկուած ժամագէտ-քննիչի ներկայացուցած տեղեկագրին, Պնամակալ Մարմինը բնաւ կարեւոր յատկացում մը կարգ մը նորոգութիւններու եւ յաւելումներու համար։ Առաջին առիթով տանիքը ենթարկուեցաւ հիմնական նորոգութեան, ապա Մատենադարանը օժտուեցաւ երկու հայերէն գրամբէնաներով եւ նոր հեռագայնով։ Յառաջիկայ տարեշրջանին կը յուսանք իրագործել նաեւ մնացեալ աշխատանքները. ա) Թերթերու եւ Հանդէսներու համար նոր դարակներու շինութիւն, բ) պատուահաններու փոփոխութիւն, գ) Թղթածրարներու նոր պահարան եւ դ) գիրքերու հակաճեխում միջատներու եւ լն.ի դէմ։

Գ) Նոր Գիրքերու Ստացում. — 1969-ի Տարեշրջանին նուիրատուութեամբ, փոխանակութեամբ կամ դնամբ, ստացած ենք հետեւեալ գիրքերու քանակները. —

- | | |
|-------------------|-----|
| 1. Նուէր ստացուած | 279 |
| 2. Փոխանակութեամբ | 22 |
| 3. Գնուած | 81 |

Դ) Ելեմտական.—

	Ի. Լ.
1. Նոր գիրքերու եւ թերթերու գնում	2023.25
2. «Սխոն»ի հետ փոխանակուած թերթերու համար	1000.00
3. Կազմողչէք գիրքերու, թերթերու	1334.00
4. Ամսականք	6560.00
5. Աշխատավարձք	927.50
6. Գրենական պիտոյք եւ դանազան ծախքեր	1088.05
7. Թղթատարական ծախքեր	1208.75
8. Զանազան ելեկտրական եւ այլ նորոգութիւնք	141.50
Համագումար՝	14283.05

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՑՃԵԱՆ

Քարտուղար

Կիւլպինկեան Մատեմադարանի

31 Դեկտեմբեր 1969